ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 18-Ա

«17» մարտի 2020 թվական գյուղ Թորոսգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ԳՈԳՀՈՎԻՏ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 1.184195 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՔԱՎԱՅՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, 81-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 26-ի N 47-Ա հրամանով <<ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 2019 թվականի մայիսի 14-ի ՇԱԹ-29/601 թույլտվության, 2019 թվականի մայիսի 14-ի N Լ-601 լեռնհատկացման ակտի և ընդերքօգտագործման 2019 թվականի մայիսի 14-ի N Պ-601 պայմանագիրը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 103 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ավագանու

2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 36 և 2020 թվականի մարտի 10-ի թիվ 9 որոշումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-112-0110-0019, 08-034-0108-0019, 08-034-0108-0022, 08-034-0108-0024 և 08-034-0108-0025 կադաստրային ծածկագրերով 1.184195 հեկտար հողամասերը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ 07112019-08-0046, 02032020-08-0048, 03032020-08-0069, 03032020-08-0073, 03032020-08-0072) բազալտի արդյունահանում իրականացնելու, ընդերքօգտագործման թափոնների վերամշակելու, հանքակոպճի արտադրություն կազմակերպելու և հողամասի նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու նպատակով 12 տարի ժամկետով (մինչև՝ 2032 թվականի մայիսի 14-ը), մեկ հեկտարի համար 150000 Հայաստանի Հանրապետության /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ վարձավճարով վարձակալության տրամադրել <<Արծաթե Սյուն>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը:
2. <<Արծաթե Սյուն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի վարձակալության պայմանագիր և դրանից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ ընկերության միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«17» մարտի 2020 թվական
գյուղ Թորոսգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 19-Ա

«17» մարտի 2020 թվական գյուղ Թորոսգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ԹՈՐՈՍԳՅՈՒՂ) ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ԿԻՑ ՄԱՐԱԳ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔ) ՔԱՂԱՔԱՑԻ ՋՈՒԼԻԵՏԱ ՀՐԱՆՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594, 595, 596-րդ հոդվածների դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 10-ի թիվ 10 որոշումը և հաշվի առնելով քաղաքացի՝ Ջուլիետա Պետրոսյանի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Թորոսգյուղ բնակավայրի 5-րդ փողոց տուն 3 հասցեում գտնվող 08-042-0023-0001-001 կադաստրային ծածկագրով (վկայական թիվ՝ 17022020-08-0070) 106,9մ^2 բնակելի տունը (կից մարագ 12,48մ^2, անասնաշենք 42,41մ^2) սեփականության իրավունքով, անհատույց, նվիրատվության պայմանագրով տրամադրել այդ բնակելի տանը 1991 թվականից փաստացի բնակվող Ջուլիետա Հրանտի Պետրոսյանին:
2. Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 595-րդ և 596-րդ հոդվածների համաձայն նվիրատի հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր և դրանից բխող իրավունքները ներկայացնել օրենքով սահմանված կարգով պետական գրանցման՝ վերջինիս միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«17» մարտի 2020 թվական
գյուղ Թորոսգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 20

«17» մարտի 2020 թվական գյուղ Թորոսգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 29-րդ կետերով, 39-րդ հոդվածի 14-րդ մասի 1-ին, 3-րդ կետորով, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ», «ե» կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2020 թվականի մարտի 13-ի թիվ 108-Ա որոշման 4-րդ կետը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետությանում ընդհանուր հիվանդության «Հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող» դեպքի արձանագրմամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատի համայնքային օպերատիվ շտաբ՝ համաձայն հավելվածի:
2. Անհրաժեշտության դեպքում իրականացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանով նախատեսված համապատասխան գործողություններ:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի տարածքում գործող հանրային սպասարկման և ծառայություններ մատուցող կազմակերպություններին իրազեկել աշխատողների անհատական պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտության մասին:

4. Օպերատիվ շտաբի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման իրավասությունը վերապահել շտաբի պետի տեղակալին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օպերատիվ շտաբի անդամներին իրազեկման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«17» մարտի 2020 թվական
գյուղ Թորոսգյուղ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Սարապատ համայնքի ղեկավարի
2020 թվականի մարտի 17-ի
թիվ 20 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավար Ա. Մանուկյան՝ համայնքային օպերատիվ շտաբի պետ.
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Արշակյան՝ համայնքային օպերատիվ շտաբի տեղակալ.
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի օգնական Ա. Սարգսյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի ոստիկանության բաժնի տեսուչ Ռ. Հովսեփյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի աշխատակազմի քարտուղար Հ. Ավետիսյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանի առաջատար մասնագետ Գ. Տիգրանյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանի առաջատար մասնագետ Հ. Մարտիրոսյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ Ն. Մաթևոսյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Գ. Խաչատրյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Հողմիկ բնակավայրի վարչական ղեկավար Ա. Կյուրեղյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Գոգհովիտ բնակավայրի վարչական ղեկավար Ս. Ավետիսյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
12. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Արփենի բնակավայրի վարչական ղեկավար Վ. Առաքելյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
13. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Ցողամարգ բնակավայրի վարչական ղեկավար Գ. Բարսեղյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.

14. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Մուսայելյան բնակավայրի վարչական ղեկավար Կ. Վարդանյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
15. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Հարթաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գ. Գալստյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
16. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Սալուտ բնակավայրի վարչական ղեկավար Մ. Խաչատրյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
17. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Բաշգյուղ բնակավայրի վարչական ղեկավար Վ. Մովսիսյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
18. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Փոքր Սարիար բնակավայրի վարչական ղեկավար Տ. Արշակյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
19. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Կաքավասար բնակավայրի վարչական ղեկավար Ս. Ավագյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
20. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Սարապատ բնակավայրի վարչական ղեկավար Կ. Մարտիրոսյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ.
21. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Ձորաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գ. Սահակյան՝ համայնքային օպերատիվ շտաբի անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**